## 36. Ներքին ժամատան մեջ, հատակի տապանաքարերից մեկի վրա

**Հ *ՌՃԼ* *Մ* 1681**

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Թվ. ՌՃԼ:*
2 *Այս է տապան Սարգսի եպիսկո-*
3 *պոսին եւ Նորոգող մենաստանիս:*

Ծանոթություն.— *Հմմտ. № 14 արձ.:*

## 37. Ներքին ժամատան մեջ, փոքր տապանաքար հատակին

***ԺԴ—ԺԵ դար***

Հրատարակվում է առաջին անգամ

*Վա̅նկ*

Ծանոթություն.— *Հարթ տապանաքար է, որի երեսին փորագրված է լուսասփյուռ ունեցող իշխանի պատկեր, ամբողջ հասակով պառկած, ձեռները կրծքին ծալած, ինչպես վայել է ննջեցյալին: Զգեստը երկար, ծնկներից ներքև է հասնում. մեջքին՝ գոտի. իսկ գոտուց կախված է մի բանալի, որ հավանաբար պաշտոնն է մատնանշում: Ծնկների մոտ մի տախտակ (կամ գիրք) կա, վրան գրված է՝*

***ՍՌ***
***ԿՕ***
***ԱՔ:***

*Թվում է պատահական գրեր են և որևէ իմաստ չունեն:*

## 38. Ներքին ժամատան մեջ, տապանաքարի վրա

***ԺԶ—ԺԷ դար***

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Այս է հանգ-*
2 *իստ Դուրմի-*
3 *{ի}շին:*

Ծանոթություն.— *Երրորդ տողի առաջին* ի *գիրն ավելորդ է, անվան ճիշտ ձևը Դուր*միշ է:

## 39. Ներքին ժամատան մեջ, տապանաքարի վրա

**Հ *ՉԾ* *Մ* 1301**

Հրատարակված է Ղրիմ 65

1 *Այս յուսով հանգ-*
2 *իստ Խորամու է,*
3 *ՉԾ:*

Տարընթերցում.— Ղրիմ *անունը կարդացել է* Խորասունի: